# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի գլխավորած պատվիրակության Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների վերաբերյալ

**Գործուղված պաշտոնատար անձիք՝** Արտակ Զեյնալյան, Սուրեն Քրմոյան, Միքայել Մինասյան, Քրիստիննե Գրիգորյան, ինչպես նաև Լիլյա Աֆրիկյան:

**Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարության վերհսկողության ծառայության պետ, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետ և ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

**Գործուղման վայրը և ժամկետները՝** Վրաստան (Թբիլիսի), 2018թ. հուլիսի 17-18-ը, իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Լիլյա Աֆրիկյանի գործուղումը՝ 2018 թվականի հուլիսի 16-20-ը:

**Հրավիրող կողմը՝** ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Շոմբի Շարփի:

**Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Բաց կառավարման գործընկերության 5-րդ համաշխարհային գագաթնաժողովին:

**Քննարկված թեմաները՝** Որոշումների կայացմանը քաղաքացիական ներգրավվածության ապահովմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և հանրային ծառայությունների առավել արդյունավետ մատուցմանը առնչվող հարցեր:

**Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝**

ՀՀ արդարադատության նախարարությունը ստացել է Բաց կառավարման գործընկերության 5-րդ համաշխարհային գագաթնաժողովին մասնակցելու հրավեր: գագաթնաժողովը տեղի է ունեցել ս.թ. հուլիսի 17-ից 19-ը Վրաստանում

(Թբիլիսիում): Բաց կառավարման գործընկերության 5-րդ համաշխարհային գագաթնաժողովին Հայաստանի Հանրապետության անունից մասնակցել են ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում են եղել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետ Քրիստիննե Գրիգորյանը, ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության ծառայության պետ Միքայել Մինասյանը:

Բաց կառավարման գործընկերության 5-րդ համաշխարհային գագաթնաժողովը նվիրված էր որոշումների կայացմանը քաղաքացիական ներգրավվածության ապահովմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և հանրային ծառայությունների առավել արդյունավետ մատուցմանը: Գագաթնաժողովի նպատակներն էին նպաստել համագործակցային ուսուցմանը, ոգեշնչել բաց կառավարման բարեփոխիչներին բարձրացնել հավակնությունների մակարդակը և առաջ մղել բաց կառավարության օրակարգը՝ նոր մարտահրավերներին դիմակայելու և աշխարհով մեկ քաղաքացիների կյանքը բարելավելու համար:

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը Բաց կառավարման գործընկերության 5-րդ համաշխարհային գագաթնաժողովի շրջանակներում հանդես է եկել ելույթով: Իր ելույթով ՀՀ արդարադատության նախարարը գագաթնաժողովի մասնակիցներին ներկայացրել է Հայաստանում այս տարվա ապրիլ մայիսին տեղի ունեցած թավշյա հեղափոխության արդյունքներով ձևավորված նոր կառավարության առաջնահերթությունները, կոռուպցիայի դեմ պայքարի և որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության դերի բարձրացման ուղղությամբ նախատեսվող քայլերը, ինչպես նաև ՀՀ կառավարության ջանքերն ուղղված Արևելյան գործընկերության «20 արդյունք մինչև 2020-ը» փաստաթղթի արդյունավետ և լիարժեք կատարմանը:

Գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարը հանդիպումներ է ունեցել Բաց կառավարման գործընկերության քարտուղարության

ներկայացուցիչների, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավարի օգնականի և այլ պաշտոնատար անձանց հետ:

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը մասնակցել է նաև Վրաստանի, Արգենտինայի, Ալբանիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի իր գործընկերների հետ «Stand Up For Justice» խորագրով քննարկմանը, որտեղ նախարարները ներկայացրել են ՄԱԿ Կայուն զարգացման նպատակների իրագործման ազգային գործողությունների ծրագրերը և անդրադարձել իրենց երկրներում արդարադատության մատչելիությանն առնչվող քայլերին ու մարտահրավերներին:

Թբիլիսի կատարած այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը հանդիպել է նաև Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանիի հետ: Հանդիպման ընթացքում գործընկերները քննարկել են արդարադատության ոլորտում համագործակցության ուղղություններն ու նախանշել դրանք խորացնելու լուրջ հանձնառությունն ու ներուժը:

Հարկ է նաև նշել, որ Բաց կառավարման գործընկերության 5-րդ համաշխարհային գագաթնաժողովի շրջանակներում ելույթով հանդես է եկել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը՝ անդրադառնալով հանրային ծառայությունների մատուցման ոլորտում Կառավարության կողմից կիրառվող և ծրագրավորված նորարարական մոտեցումներին:

**Հարգանքով՝** **Արտակ Զեյնալյան**

Invalid signature

X

Artak Zeynalyan